2/32.7/11014

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«06» 10 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000082

Ձեռնարկողը՝ ***«Յուլի Դալի» ՍՊԸ***
ք. Երևան, Տիգրան Մեծ 1-ին նրբանցք/5

Գործունեությունը՝ ***Վայոց Ձորի մարզի Գնիշիկի քվարցիտների <<Փալի>> տեղամասում 2020-2021թ. թ. ընթացքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Վայոց Ձորի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

Թիվ ԲՓ 000082

< 06 **>** 10 **2020թ.**

Վայոց ձորի մարզի Գնիշիկի քվարցիտների հանքավայրի <<Փալի>> տեղամասում 2020-2021 թթ. ընթացքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Յուլի Դալի» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր / Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Վայոց ձորի մարզի Խաչիկ բնակավայր

Վայոց ձորի մարզի Գնիշիկի քվարցիտների հանքավայրի «Փալի» տեղամասում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի հետախուզման աշխատանքներ:

Հետախուզման համար ընտրված 2.22հա տարածքը գտնվում է Խաչիկ գյուղի վարչական տարածքում՝ Գնիշիկ գյուղից 4.5կմ, իսկ Ամաղլու գյուղից 4.7կմ հեռավորության վրա: Տեղամասը Խաչիկ գյուղի հետ կապված է 2.5կմ գրունտային և 5կմ ասֆալտապատ ճանապարհով:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող հողերը հաշվառված են որպես ընդերքօգտագործման հողեր: Նախատեսվող գործնեության համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի ա) ենթակետի այն հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

Նկարագրական մաս. համաձայն ГОСТ 22551-2019 տեխնիկական պահանջների կատարել տեղամասի քվարցիտների հանքերակման մանրազնին հետախուզում՝ որպես ապակու հումք-ֆլյուս՝ ուսումնասիրելով քվարցիտները մակերեսում և խորքում՝ ամբողջ հզորությամբ:

Երկրաբանահետախուզական աշխատանքները կիրականացվեն 20-75մ խորությամբ 8 հորատանցքերի, մինչև 8.0մ խորությամբ 4 հետախուզահորերի մերկացման միջոցով, որը կզուգորդվի նմուշարկման աշխատանքներով: Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընկերությանը երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրված տարածքը

սահմանափակվում է ստորև նշված ծայրակետային կոորդինատներով (ARM WGS ՎՆ 84 համակարգով)

1. X=8521119 Y=4391311
2.X=8521127 Y=4391345
3. X=8521174 Y=4391571
4. X=8521235 Y=439154
5. X=8521274 Y=4391520
6. X=8521234 Y=4391417
7. X=8521194 Y=4391323
8. X=8521177 Y=4391316
9. X=8521141 Y=4391289

Տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ՝ բոլոր հետախուզական փորվածքների ու նմուշարկման տեղերի և ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ:

Տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար նախատեսվում է հորատել 8 հորատանցք՝ 20-75մ խորությամբ, ընդհանուր 385.0մ³ ծավալով: Հորատումը կատարվելու է ՈՒԳԲ-50Մ հորատող հաստոցով, պաբեդիտով և ալմազե թագիկներով, 132մմ սկզբնական տրամագծով և 76մմ վերջնական տրամագծով: Հորատումն իրականացվելու է հիմնականում չոր եղանակով /անհրաժեշտության դեպքում առանձին ինտերվալներում նաև թաց/, որը կապահովի հանուկի բարձր ելքը ու կկազմի 90%:

Նախատեսվում է հորատել 8 հորատանցք, որի համար 8 անգամ կկատարվի ՈՒԳԲ-50Մ ինքնագնաց հորատող հաստոցի տեղակայում և ապատեղակայում:

Նախատեսվում է անցնել 4 հետախուզահոր՝ յուրաքանչյուրը 8մ խորությամբ: Հետախուզահորերը նախատեսվում է անցնել էքսկավատորով, քանի որ ապարները փուխր-բեկորային են: Հետախուզահորերի ծավալը կկազմի՝ 32գծ.մ կամ 76.8մ³, այդ թվում՝ 1.34մ³-ը կգոյանա հողաբուսական շերտից /միջին հզորությունը 0.14մ/: Հետախուզահորի մակերեսը կազմում է 2.4մ²: Հետախուզահորերի զբաղեցրած ընդհանուր մակերեսը կազմում է 9.6մ²:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր լեռնային փորվածքները՝ հորատանցքերը և հետախուզահորերը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալներն են.

- հորատաանցքեր՝ 385.0գծ.մ,
- հետախուզահորերի փաստագրում՝ 32.0գծ.մ,
- մերկացման փաստագրում՝ 5.5մ,
- ընդամենը՝ 422.5գծ.մ:

Աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է հետախուզահորերի անցման ժամանակ առաջացած 76.8մ³ ծավալով զանգվածի հետլցում: Աշխատանքները կկատարվի ձեռքով:

Քվարցիտների որակա-տեխնոլոգիական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է բոլոր փորվածքներում կատարել նմուշարկման աշխատանքներ, հորատանցքերից հանուկային, իսկ հոտախուզահորերում՝ ակոսային եղանակով: Դաշտային աշխատանքների ընթացքում կվերցվեն 61 նմուշներ, այդ թվում՝ 50 հանուկային, 8 ակոսային և 1 համախառը նմուշ: Հորատանցքերից նախատեսվում է վերցնել հանուկային նմուշ, յուրաքանչյուրը 7մ երկարությամբ: Ընդունելով հանուկի ելքը 90%, նմուշների քանակը կկազմի՝ 385x90%:7=50 նմուշ: Հետախուզահորերից նախատեսվում է վերցնել ակոսային 8 նմուշ /յուրաքանչյուրից 2-ական նմուշ/՝ և 2 նմուշ մերկացումից մինչև 1 մետրանոց ակոսներով:

ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Ակոսային նմուշները կվերցվեն 35սմ կտրվածքով: Ապարի քիմիական և միներալոգիական հետազոտությունների համար կվերցվի համապատասխանաբար 14 և 6 նմուշ:

Քիմիական անալիզների արդյունքում նախատեսվում է որոշել՝ SiO_2; Fe_2O_3; Al_2O_3; TiO_2; CaO; MgO պարունակությունները, իսկ վերցված նմուշներից կազմված 10 բնութագրական նմուշներով նախատեսվում է իրականացնել սպեկտրալ անալիզներ, որի արդյունքում կպարզվի բացի վերոնշյալ էլեմենտներից այլ էլեմենտների առկայությունը: Նախատեսվում է վերցնել 1 համախառը նմուշ /150կգ քաշով/՝ գործարանային պայմաններում տեխնոլոգիական փորձարկումների համար:

Ապարի քիմիական և միներոլապետրոգրաֆիական ուսումնասիրությունները կիրականացվեն ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում: Օգտակար հանածոյի լաբորատոր հետազոտությունները կկատարվեն «Անալիտիկ» ՓԲԸ ֆիզիկատեխնիկական փորձարկումների լաբորատորիայում, «Գիտական հետազոտությունների և փորձագիտական կենտրոն» ՍՊԸ-ի լաբորատորիայում, «Հատուկ Ցեմենտ» ՍՊԸ-ի և «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի մասնագիտացված լաբորատորիաներում:

Հետախուզվող տարածքում ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ: Ինժեներաերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել՝ տեղամասի ապարների կազմը, ապարների կառուցվածքային առանձնահատկությունները, անիզոտրոպիան, պարզաբանել նաև տեղանքի գեոդինամիկ պրոցեսները: Հիդրոերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել հիմնական ջրատար հորիզոնները, եթե այդպիսիք կան, ուսումնասիրել և նկարագրել դրանք, ուսումնասիրել ջրի որակը, ամիսը մեկ անգամ կատարել ռեժիմային դիտարկումներ:

Տեղամասի տարածքում և անցած հետախուզական փորվածքներում հՀկ– 68-01 (N596) ռադիոչափիչ սարքով գամմա պրոֆիլավորման գամմա ակտիվության չափումների միջոցով, նախատեսվում է չափել քվարցիտների և պարփակող ապարների ռադիոակտիվությունը:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հորատահարթակների կառուցման ժամանակ հանել հողի մակերեսի շերտը՝ 0.30մ խորությամբ, պահեստավորել, իսկ լանդշաֆտի վերականգնման նպատակով աշխատանքների ավարտից հետո ծածկել հողաշերտով: Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է տարածքի մակերեսից՝ հողաբուսաշերտը վերականգնելով 0.30մ խորության վրա:

Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կազմում է 249.6մ^2 /հորատհրապարակներ՝ 240մ^2, հետախուզահորեր՝ 9.6մ^2 /: Վերականգնման ենթակա ծավալը կկազմի 94.8մ^3 /հորատահարթակներ՝ 18.0մ^3, հետախուզահորեր՝ 76.8մ^3: Այդ ծավալները կարճաժամկետ կուտակվում են խախտված տարածքների անմիջական հարևանությամբ առանձին-առանձին: Աշխատանքների ավարտից անմիջապես հետո ամբողջությամբ օգտագործվելու են խախտված հողատարածքներից հանված հողաշերտը՝ այն օգտագործվելով վերականգնման համար: Ռեկուլտիվացիայի ընդհանուր գումարը կկազմի 199680 դրամ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ ժամանակավորապես օգտագործումից դուրս եկած հողերի ընդհանուր մակերեսը կազմում է ընդամենը՝ 0.025հա: Հողօգտագործման դեպքում համայնքներին հասցված վնասի փոխհատուցման գումարը կկազմի՝ 0.025հա x 350000դրամ = 8750դրամ:

Ծրագրով նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, քանի որ տեղանքում կան հանդամիջյան գրունտային ճանապարհներ, որոնք բարենպաստ են և ընկերությունը կարող է օգտվել այդ ճանապարհներից:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT CENTER
ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները: Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Համաձայն ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի աշխատակիցներ կենսաբանական գիտությունների դոկտոր Գ.Մ. Ֆայվուշի և կենսաբանական գիտությունների թեկնածու Ա.Գ. Ղուկասյանի, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի աշխատակից Մ.Յ.Քալաշյանի կողմից Գնիշիկ քվարցիտների հանքերևակման «Փալի» տեղամասում իրականացվել են գիտարշավներ, որի արդյունքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները և մշտադիտարկումները.

- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում՝ որպես մետաղական ջարդոն: Ուտիլիզացիայի պայմանագիրը կկնքվի ընդերքօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո,
- կենցաղային աղբի կուտակում՝ 35լ տարողությամբ տոպրակների մեջ և տեղափոխում Արենի համայնքի աղբամաններ, որտեղից պարբերաբար Կոմունալ ծառայության կողմից տեղափոխվում են շրջանի աղբավայր,
- արտանետվող թունավոր գազերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում (ծխագազերի ֆիլտրներ),
- փոշենստեցման նպատակով մոտեցնող ճանապարհի ջրցանում՝ տարվա չոր և շոգ եղանակներին,
- հետախուզահորերի տարածքում ջրցանում չի նախատեսվում, քանի որ ավազների զանգվածը գտնվում է խոնավ վիճակում, անգամ տարվա չոր ամիսներին՝ ջրերի կապիլյար բարձրացման հաշվին,
- աշխատանքների ավարտից հետո սեպտիկ հորերը /զուգարանը/ դատարկում են համապատասխան ծառայության ուժերով, որի հետ պայմանագիրը կկնքվի ընդերքօգտագործման իրավունքը ստանալուց հետո,
- խախտված հողերի վերականգնում,
- ըստ կիրառելիության՝ ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N781-Ն որոշման դրույթների ապահովում:

Գնիշիկի քվարցիտների հանքավայրի «Փալի» տեղամասում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:
- նավթամթերքներով երևակման տարածքի աղտոտվածության մոնիթորինգ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ:

Պատճառաբանական մաս. Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունը կլինի թույլատրելի նորմայի սահմաններում:

Համայնքը տվել է իր նախնական համաձայնությունը 2.22հա տարածքում իրականացվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների վերաբերյալ:

Խաչիկ բնակավայրում, օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մացնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ինչպես նաև առողջապահության նախարարությունը և Վայոց Ձորի մարզպետարանը: Փորձաքննության գործընթացում նախագիծը վերադարձվել է լրակազմման, որում հաշվի են առնվել ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:

Փորձաքննական պահանջներ

– Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

– Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Յուլի Դալի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Վայոց Ձորի մարզի Գնիշիկի քվարցիտների հանքավայրի «Փալի» տեղամասում 2020-2021թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան